



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐՈՒՆ ՆՈՒՐՈՒԱԾ Ա. ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՁԵՆԱՐԿ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Ընդառաջելով 2011ը Հայ Մանուկի Տարի հռչակող Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին, Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը Հինգշաբթի, 10 Փետրուարի կեսօրին կազմակերպած էր դասախօսական ձեռնարկ մը, որ տեղի ունեցաւ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, եւ որուն ընկերացաւ ճաշկերոյթ: Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազանին՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ներկայութիւնն ու հովանաւորութիւնը: Ներկայ էին Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան, Ազգ. Առաջնորդարանի յանձնախումբերու ներկայացուցիչներ եւ աւելի քան հարիւր մասնակցիներ:

Դասախօսական այս ձեռնարկը մեր Թեմին մէջ առաջին պաշտօնական հանդիպումն էր, նուիրուած՝ Հայ Մանուկի Տարուան. յառաջիկայ ամիսներուն, նախատեսուած են այլ ձեռնարկներ եւս:

Բացման խօսք արտասանեց Տ. Օ. Մարմինի անդամներէն Տիկին Հուրիկ Ապտուլեան որ նաեւ կատարեց հանդիսավարութիւնը: Ան ողջունեց ներկաները, անդրադարձաւ առիթին ու վեր առաւ նոր սերունդին հանդէպ հոգածութեան, անոր առողջ կազմաւորման կարելորդութիւնը:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղանի օրհնութիւնը եւ օրուան յատուկ բարեմաղթութիւններ փոխանցեց ներկաներուն:

Ճաշի պահէն ետք, յաջորդաբար դասախօսեցին Ազգ. Վահան եւ Անուշ Շամլեան վարժարանի փոխ տնօրէնուհի Տիկին Ռիթա Գաբրիէլեան եւ Տնօրէն Տիար Վազգէն Մատենլեան: Առաջինին նիւթն էր «Հայ մանուկին դաստիարակութիւնը ամերիկեան միջավայրին մէջ», իսկ երկրորդին նիւթը՝ «Հայեցի դաստիարակութիւն եւ նախադրեալները»:

Տիկին Գաբրիէլեան, իբրեւ մեկնակետ ունենալով Վեհափառ Հայրապետին պատգամը, խօսեցաւ Հայ Դպրոցի պարտաւորութեանց ու առաքելութեան մասին: Ան նշեց, որ հայ դպրոցը ունի կրկնակ պարտաւորութիւն, հայ մանուկը կրթել իբրեւ բարի նկարագիրի տէր ու հայօրէն ապրող անհատ, այլ խօսքով, դպրոցին առաքելութիւնն է մարդակերտում ու հայակերտում, սակայն այս աշխատանքը պիտի տանի այն մտասեւեռումով, որ հայ աշակերտը հեռու պահուի միջավայրի բացասական ազդեցութիւններէն:

Միջավայրի հարցին ու ազդեցություններուն մասին խօսելով, ան անդրադարձաւ ամերիկեան միջավայրին մէջ հասակ առնող հայ մանուկին ու աշակերտին դիմագրաւած դրական ու ժխտական ազդեցություններուն: Ան նշեց, որ արդի արհեստագիտութիւնը այսօր մեծ դիրութիւններ կ'ընծայէ անհատին, ներառեալ մանուկներուն, անոնց տրամադրութեան տակ դնելով համակարգիչը, արդիական սարքերով խաղեր, հաղորդակցութեան միջոցներ, պատկերասփիռ եւ այլն: Այս բոլորը անկասկած որ ունին օգտակար երեսներ, պայմանաւ, որ ծնողներ ու երեց սերունդներ ազնիւ հակակշռում ստեղծեն անոնց օգտագործման մէջ: Ան մանրամասնօրէն անդրադարձաւ այս միջոցները օգտակարօրէն մանուկին հայթայթելու միջոցներուն մասին, որպէսզի անոնք հեռու մնան չափազանցութենէ ու ժամանակի կորուստէ, մսխումէ: «Յամացանցն ու վիտօ-խաղերը կրնան հոյակապ աղբիւրներ ըլլալ մանուկի դաստիարակութեան համար, այսուհանդերձ, անոնց չափազանցութեամբ օգտագործումը կրնայ նաեւ շատ վնասակար ազդեցութիւն ունենալ մանուկին վրայ», ըսաւ դասախօսը, եւ մասնագիտական որոշ ուսումնասիրութիւններու հիմամբ, ցուցմուքներ տուաւ, թէ արդի «գործիքներու» հաւասարակշռեալ օգտագործումը ինչ ժամանակով պէտք է տրամադրել մանուկներուն: Նմանապէս ուսումնասիրութիւններու վրայ հիմնուելով՝ ան բացատրեց, թէ անհաւասարակշիռ օգտագործումը ինչպիսի դժուարութիւններ ու միջնէն իսկ ֆիզիքական ու հոգեբանական ախտեր կրնան յառաջացնել, բացասական ազդեցություններ ունենալ մանուկին կեանքին ու յարաբերութիւններուն վրայ:

Մնալով ամերիկեան միջավայրի կարգ մը բացասական ազդեցություններու ոլորտին մէջ, Տիկին Գաբրիելեան հպանցիկ բաղդատական մը կատարեց Միջին Արեւելքի մէջ հասակ առած մանուկներու շրջապատի ու ընկերային առաւելութիւններուն հետ ու նկատեց, որ այստեղ, նման յարմարութիւններէ զուրկ կը մնան մանուկները: Ան իր խօսքը եզրափակեց նշելով, որ հայրենիքէն հեռու ապրող՝ ժառանգականութեամբ հայ, բայց միջավայրով ամերիկացի մեր մանուկներուն հանդէպ պէտք է ցուցաբերել հոգածու վերաբերմունք, որպէսզի ան մարմինով ու միտքով աճի առողջ պայմաններու մէջ, ըլլալ բարձր բարոյականի տէր, պատուաբեր հայորդի:

Տիար Վազգէն Մատելեան խօսեցաւ հայ մանուկի հայեցի դաստիարակութեան լայն տարածքին մասին, շեշտելով, որ հայ հաւաքականութեան գործօն անդամը կը կերտուի մանկութենէն, հիմնականին մէջ հայ դպրոցի յարկին տակ, հայաշունչ միջավայրի ու մթնոլորտի մէջ, իսկ դպրոցին լրացուցիչ գործօնը հայկական միութիւններն ու կազմակերպութիւններն են, անոնք ըլլան մարզական, մշակութային, կուսակցական թէ այլ: Ան զանազան օրինակներով խօսեցաւ բարձր զարգացման հասնող անհատներու մասին, որոնք կրնան հեռու մնալ հասարակական կեանքէ, հայութեան հաւաքական գործի դաշտերէն, մինչդէռ կը հանդիպինք նաեւ անհատներու, որոնք կրնան բարձր զարգացում չունենալ, սակայն գործնապէս ներդրում կ'ունենան հայութեան կեանքին մէջ: Ան նաեւ յիշատակեց պարագաները այնպիսի հայերու, որոնք, ապրելով հանդերձ հայկական միջավայրի մէջ, կը մնան անիրազէկ մեր

կարգ մը իրականութիւններուն ու անտարբեր՝ մեզ յուզող ու տագնապեցնող հարցերու նկատմամբ: Այս մօտեցումով, ան հանգամանօրէն անդրադարձաւ անհատի մը զարգացման ու հաւաքական կեանքին մէջ գործունեայ ըլլալու չափանիշներուն, ընդգծելով, որ հայ դպրոցին ու հայկական նմանօրինակ միջավայրերուն պարտականութիւնն է մանուկին մէջ ստեղծել հաւասարակշռութիւն մը, մէկ կողմէ՝ գիտելիքներու իւրացման, միւս կողմէ՝ հայութիւնը յուզող հարցերու իրազեկման եւ այլ գիծի մը վրայ՝ ընկերութեան գործօն ու արդիւնաւոր մէկ տարրը դառնալու առումով: Մէկ խօսքով, կերտել անհատ մը, որ ոչ միայն քաջատեղեակ ըլլայ իր շրջապատի ու ժողովուրդի հարցերուն, խնդիրներուն, այլ նաեւ պատրաստուի իր դրական մասնակցութիւնը բերելու այդ հարցերուն դիմագրաւման գործի դաշտերուն մէջ: Ան նշեց, որ եթէ նախընտրելի չէ ունենալ մասնագէտ անհատներ, որոնք իրենք զիրենք հեռու կը պահեն մեր հաւաքական կեանքէն ու գործի միջավայրերէն, նոյն մօտեցումով ալ անհրաժեշտ է ունենալ գործողներ, որոնք իրազեկ պետք է ըլլան հիմնական իրականութիւններու: Յայ դպրոցին առաքելութեան մէջ կ'իյնայ կերտել հայրենասէր, գիտակից ու գործունեայ հայ անհատներ, իսկ հայկական միութիւններն ու կազմակերպութիւնները այն միջավայրերն են, ուր անհատը կը սորվի ու կը գործէ այնպիսի տուեալներով, որոնք կարելի չէ ձեռք բերել համալսարաններէ կամ համագումարներէ: Իբրեւ եզրակացութիւն, ան ըսաւ, որ հայ մանուկին հայեցի դաստիարակութիւնը կը կերտուի հայ դպրոցին ու հայկական կազմակերպութեանց մէջ, երկու անխուսափելի որլորտներ:

Ձեռնարկին եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը: Ան ողջունեց ներկաները, միութենական ներկայացուցիչները, ապա դրուատիքով անդրադարձաւ Ազգ. Առաջնորդարանի Տ. Օ. Մարմինի աշխատանքին, նշելով, որ ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի եւս, Մարմինը եղաւ Վեհափառ Հայրապետի պատգամին գործնապէս առաջին ընդհանրաշողներէն: Ան գնահատանք արձանագրեց հաճելին ու օգտակարը մէկտեղող այս ու նմանօրինակ ձեռնարկներու կազմակերպման համար, ինչպէս նաեւ բարձր գնահատեց Հայ Մանուկին առողջ դաստիարակութեան ու աճումին գծով երկու բանախօսներուն ներկայացուցած տեսակետները, որոնք նկատի ունէին ամերիկեան տարբեր ազդեցութիւններու ենթակա ըլլալու մեր մանուկներուն վիճակը:

Առաջնորդ Սրբազանը կարեւորութեամբ կանգ առաւ հայ մանուկին դաստիարակութեան ու հոգեմտաւոր աճումին մէջ ծնողներուն, ուսուցիչին, դպրոցին ու եկեղեցւոյ դերին վրայ, նկատել տալով, որ ազգային տարբեր բնագաւառներու մէջ գործողներ ու ծառայողներ հայ մանուկի դաստիարակութեան ու իրենց ազգային աշխատանքներուն մէջ աւելի արդիւնաւոր կրնան ըլլալ, եթէ փոխադարձաբար զիրար ճանչնան, յարգեն ու գործակցութեան միջոցներ ստեղծեն:

Անդրադառնալով Վեհափառ Հայրապետի տարեսկիզբի պատգամին, ան նկատել տուաւ, որ հոն կարեւորութեամբ շեշտուած է այն իրողութիւնը, որ մեր մանուկները մեր ապագան են, ու եթէ այսօր կը նայինք մեր հայրենիքին, ժողովուրդին, եկեղեցւոյ ու ազգի ապագային, պետք է մեր աչքերը դարձնենք մանուկներուն, մանաւանդ, որ մեր Տերը պատգամած է

ըսելով՝ «Կրթե մանուկը իր ճամբան սկսած ատենը...»: Ան դիտել տուաւ, որ հայ մանուկին ճամբան կը սկսի ընտանիքին յարկին տակ, ուր ան կը ծնի, յետոյ, սկիզբներ են այն հանգրուանները, երբ մանուկը դպրոց կ'երթայ, եկեղեցի ու կիրակնօրեայ կը յաճախէ, ակումբ կը մտնէ կամ միութեանց անդամ կը դառնայ: Ան յիշեցուց նաեւ Յիսուսի այն պատգամը, որ մարդս պետք է ըլլայ մանուկի նման, որպէսզի արժանի ըլլայ երկինքի արքայութեան, իսկ մեր կեանքին մէջ, կայ նաեւ ազգային կեանքին արժանի ըլլալու կարելորութիւնը:

Խօսելով անձնական փորձառութենէ, ան յայտնեց, թէ իր ծնողները զինք առաջանորդած են հայ դպրոց, հայ եկեղեցի, Յ.Ս.Ը.Ս., ապա նաեւ Անթիլիասի դպրեվանքը: Ան դրուատիքով անդրադարձաւ դպրեվանքի հայակերտման ու ազգային դերակատարութեան, երախտիք արտայայտելով մեծ ուսուցիչներուն ու դաստիարակներուն, որոնց բացած ուղիները այսօր օրինակ են նոր սերունդներուն: Ան շեշտեց, որ հայ ծնողներ, ուսուցիչներ ու ազգային միջավայրի մէջ ծառայողներ յատուկ առաքելութիւններ ունին՝ ըլլալու հոգածու եւ պաշտպան մեր մանուկներուն: Առաջնորդ Սրբազանը զգուշացման հրաւեր ուղղեց, որպէսզի ծնողներ չիյնան չափազանցութիւններու մէջ, այլ ունենան արդար ու հաւասարակշռած մօտեցում՝ մանուկին հոգելոր, բարոյական, ազգային եւ մարդկային աճումի կարիքներուն բաւարարութեան մէջ: «Չեմ կասկածիր, որ ծնողք նախանձախնդիր են ու բարիք կը ցանկան իրենց զաւակներուն, սակայն նաեւ անհրաժեշտ է, որ արդար մօտեցումը չկորսուի բազմաճիւղ դաստիարակութեան ընթացքին», եզրափակեց Առաջնորդ Սրբազանը, անգամ մը եւս գնահատելով ձեռնարկին կազմակերպիչներն ու մասնակիցները:

Հանդիպումը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով:

"YEAR OF THE ARMENIAN CHILD" KICKS OFF WITH A LITERARY LUNCHEON AT THE PRELACY

On Thursday, February 10th, 2011, "Year of the Armenian Child" celebrations began with a literary luncheon held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Prelacy Ladies Auxiliary. Executive Council Chair Mrs. Rima Boghossian and over a hundred guests attended the event.

The event began with welcoming remarks by Ladies Auxiliary member and Master of Ceremonies Mrs. Hourig Abdulian.

The Prelate then offered the invocation, after which lunch was served.

The lecture began after lunch. The keynote speakers were Vahan and Anoush Chamlian School Principal Mr. Vazken Madenlian and Vice-Principal Mrs. Rita Kaprielian, and the topic was "The Armenian Child within the American Social Environment".

The first lecture was presented by Mrs. Kaprielian. Speaking on the Armenian child in the American environment, she stressed that Armenian

Schools have a twofold mission in this regard; to instruct children on how to be good individuals, and also how to be good Armenians. She then reflected on the positive and negative aspects of the outside influences Armenian children are subject to. She spoke of how today's children are growing up at a time of great technological advancements, and have at their disposal the latest computers and other devices, and though on the one hand this technology surely has great benefits, parents must be sure to monitor their children to keep them from negative information and to ensure that they utilize the technology in a productive manner. Stating that "computers and video-games can be wonderful educational tools for our children, but they can have harmful effects with excessive use", she went on to give helpful tips on how parents can help children balance their time. Contrasting the social environment in which children of the Middle East grow up versus that of the United States, she stated that our children are Armenian by birth but American by circumstance, and concluded by emphasizing the necessity of providing a healthy environment in which our children can grow up to be not only honorable individuals but proud Armenians.

Mr. Madenlian was then invited to present his lecture, the foundation of which was how Armenian children can grow up to become active and contributing members of the Armenian community. He stated that those who grow up to become active members of their community are reared from a young age, are raised in Armenian schools and within Armenian environments whether athletic, cultural, or political organizations. Speaking on the association between education and level of activeness within the community, he gave examples of different types of individuals; highly educated who choose to remain outside the community, less-educated who contribute greatly to the advancement of our community, and vice-versa, and those who although are raised in an Armenian environment, grow up to become indifferent to Armenian causes and to their heritage. Thus, it is the responsibility of Armenian schools and organizations to maintain this balance by providing the right amount of education and Armenian instruction, and in addition foster in our children a love for their heritage and encourage them to become active participants in community affairs. He concluded by saying that if the school is the place where they receive this education, community organizations are where they learn how to apply what they have learned and get first hand experience on how to contribute to the community, things that cannot be learned inside the classroom.

After both presentations, the Prelate was invited to deliver his message. He commended the Ladies Auxiliary for organizing the event in celebration of the Armenian Child, and the two keynote speakers for their informative and enlightening presentations.

He then spoke of the crucial role parents, teachers, and our churches play in the proper instruction and development of our children. The Prelate reflected on the proclamation of H.H. Catholicos Aram I, in which His Holiness greatly stresses the reality that our children are our future and to look to the future of our nation, our people, and our church we need to look at our children

for in the words of our Lord, "Train up a child in the way he should go, and when he is old he will not depart from it". The path of our children start at home from the time of birth, and continues as they start attending school, church, Sunday School, and community organizations, said the Prelate. Speaking from personal experience, he told of how his parents influenced his Armenian upbringing by sending him to Armenian school, church, community organizations, and the Seminary. He spoke highly of the strong Armenian education he received at the Seminary by teachers and instructors who regarded highly the value of an Armenian education and who have become examples for today's generation. The Prelate stressed the unique mission Armenian elders have with regards to the education of our children and the importance of maintaining a balance in their spiritual, national, and social development.

The luncheon came to a close with the benediction by the Prelate.